Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 14/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում ՀՇԳՑ էներգաբլոկի CW "A" շրջանառու պոմպի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 3 հունիսի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Է. Սանամյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Ա. Չոբանյանը | - | Գլխավոր հաշվապահի տեղակալ |
| Վ. Խաչատրյանը | - | ՀՇԳՑԷ-ի ԿԸԱ-ի պետի տեղակալ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստի օրակարգը14/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. ««Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում ՀՇԳՑ էներգաբլոկի CW "A" շրջանառու պոմպի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 14/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Էներգոնորոգզարանտ»ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, ք. Մեծամոր),

1.2. «Էներգոնորոգզարանտ»ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Էներգոնորոգզարանտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը, լիցենզիայի պատճենը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Էներգոնորոգզարանտ» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 1 999 800 (մեկ միլիոն ինը հարյուրիննսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների գրաված տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Էներգոնորոգզարանտ» ՓԲԸ-ն:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ «Էներգոնորոգզարանտ» ՓԲԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը :

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում ՀՇԳՑ էներգաբլոկի CW "A" շրջանառու պոմպի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթուղթը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն ստանալու

օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում` կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ` Է. Սանամյան

Անդամներ` Ա. Չոբանյան

Վ. Խաչատրյան

Քարտուղար` Ա. Պետրոսյան